



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1  
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՎԱՆՈՒ ԱՐՏԱԿԵՐԹ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**

12.01.2024Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 21 անդամները, բացակայում են Տարոն Եփրեմյանը, Գարիկ Պալյանը, Նարեկ Բաբայանը, Նորիկ Վարդանյանը, Գառնիկ Սահակյանը և Անահիտ Խեչոյանը:  
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

**Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը, Ա. Ծերունյանը, Ս.Բալաբեկյանը և գյուղերի վարչական ղեկավարները:**

**Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալոյանը:**

Նիստը սկսվելուց առաջ, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը առաջարկեց՝ օրակարգում ավելացնել ավագանու որոշման նախագիծ՝ 3-րդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի օր սահմանելու մասին, քանի որ օրենքով սահմանված փետրվարի երկրորդ երեքշաբթի օրը՝ «Տյառնընդառաջ»-ի օրն է: Որոշվեց՝ Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի գումարման օրը սահմանել 2024 թվականի փետրվարի 15-ը:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի արտահերթ թիվ 1 նիստի օրակարգի լրացված տարբերակը՝

- 1) Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
- 2) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝**

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցերի վերաբերյալ:

**Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:**

**Լսեցին.**

**1. Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:**

**/Զեյ.Գ.Աֆյան/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի. **առաջարկում եմ.**

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամ Ա.Գալստյանը հարց բարձրացրեց 2023 թվականի համայնքապետարանի աշխատակիցների պարգևավճարումների բաշխման վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալոյանը տվեց համապատասխան պարզաբանումներ:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝**

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ- 13**

**դեմ- 7**

**ձեռնպահ-1**

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**

**Լսեցին.**

**3. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի գումարման օրը սահմանելու մասին:**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, **առաջարկում եմ.**

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի օր և ժամը սահմանել 2024 թվականի փետրվարի 15-ը, ժամը 12:00:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան՝**

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 21

դեմ- 0

ձեռնպահ-0

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**

Օրակարգային հարցերը քվեարկելուց հետո, քննարկում ծավալվեց Չարենցավան համայնքի տոնաձառի, ամանորյա զարդարանքների, Չարենցավան քաղաքի «Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տարածքում լողավազանի կառուցման, Ալափարսի Մշակույթի տան տանիքի վերանորոգման, Շահումյան փողոցի փոսերի լցման, ձյան մաքրման, աղբահեռացման աշխատանքների, Բջնի գյուղում «Արմաթ» լաբորտորիայի բացմանը ֆինանսապես օգնելու և այլ թեմաների շուրջ:

**Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝**

- |                   |                   |               |
|-------------------|-------------------|---------------|
| Առաքելյան Նորայր  | Բաղդասարյան Սահակ | Պապոյան Դավիթ |
| Բաբայան Արայիկ    | Գալստյան Արթուր   |               |
| Գասպարյան Մելիք   | Թադևոսյան Նունե   |               |
| Գևորգյան Գևորգ    | Խաչատրյան Արշակ   |               |
| Դավթյան Կարեն     | Հարոյան Լիլիթ     |               |
| Եփրեմյան Բաբկեն   | Մալխասյան Նորիկ   |               |
| Մակինյան Վարդան   | Ղամբարյան Գարիկ   |               |
| Մուքայեյան Վալերի |                   |               |
| Շահգալոյան Հակոբ  |                   |               |
| Վարդանյան Նորայր  |                   |               |
| Վարդանյան Սարգիս  |                   |               |
| Վարդանյան Սևակ    |                   |               |
| Պողոսյան Մնացական |                   |               |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՇԱՀԳԱԼԴՅԱՆ



Նիստին արձանագրեց Ս.Մուրադյան